

13 860



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

« 13 » 12 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 277 - 24

Նախաձեռնող՝

«Էկո Բիլդինգ» ՍՊԸ

Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Երկրաբանների փ. 7

Գործունեությունը՝

Արենի բնակավայրի դպրոցի կառուցում

Վայոց ձորի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 277 - 24

«13» դեկտեմբեր 2024թ.

**Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրի դպրոցի կառուցման  
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Էկո Բիլդինգ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Արենի բնակավայր

**Ներածական մաս.** «Էկո Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից՝ փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Արենի բնակավայրում կառուցել դպրոց:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության տարածքը աշխարհագրական տեսակետից գտնվում է Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրում՝ Արփա գետի ստորին հոսանքի երկու կողմերում: Արենի բնակավայրը Երևանից հեռու է 110 կմ, մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 20 կմ: Գեոմորֆոլոգիական տեսանկյունից տարածքի ռելիեֆը կառուցվածքային էրոզիոնտեղատարումային տիպի է: Տարածքը ներառում է Վայքի և Վարդենիսի լեռների արևմտյան հատվածները:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարժանների հետ:



Համաձայն նախագծի դպրոցը նախատեսվում է կառուցել 432 աշակերտի համար, երկհարկանի, որը կունենա նաև նկուղային հարկ: Նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ լուսավորություն ապահովելու համար: Առաջին հարկում տեղակայված կլինեն առաջինից մինչև 5-րդ դասարանների 2-ական լսարաններ, նախադպրոցական դասարան, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, ռազմագիտության կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճը իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև 3 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար: Մուտքային գոտուն կից տեղակայված կլինեն հաշմանդամների համար նախատեսված ուղղահայաց ամբարձիչը, ծնողների սպասասրահը ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոն:

Երկրորդ հարկում կկառուցվեն 6-ից մինչև 12-րդ դասարանների լսարանները, 2 լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված լսարանը իրեն կից լաբորատորիայով, ֆիզիկայի մասնագիտացված լսարանը՝ իրեն կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճը իրեն սպասարկող սենյակների խմբով, թվով 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Դպրոցը կունենա 36.6 մ x 91.5 մ առանցքային չափեր և սեյսմիկ կարող բաժանված կլինի 2 հավասար մասնաշենքերի: Դասասենյակները կունենան 7x7 մ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կկազմի՝ 48 մ<sup>2</sup>: Առաջին հարկի բարձրությունը կլինի 3.3 մ, իսկ երկրորդ հարկի բարձրությունը ստորին մասում կլինի 3.0 մ: Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կկազմի 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ՝ 4.5 մ: Տանիքների թեքությունը կլինի 7 աստիճան, երկշերտ ջրամեկուսիչով, վերին շերտը պաշտպանիչ մանրավազով, գույնը մուգ մոխրագույն: Տանիքի հարավ նայող լանջին նախատեսվում է տեղադրել արևային մարտկոցներ:

Համաձայն նախագծի կաթսայատունը նախագծվել է 432 հոգանոց դպրոցի սպասարկման համար: Շինությունը կլինի մեկ հարկանի, հատակագծում կունենա 6 մ x 9 մ առանցքային չափեր:

Դպրոցում նախատեսված է ընդհանուր օդափոխության մեխանիկական դրդմամբ համակարգեր:

Նախագծվող դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են համաձայն՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների:

Քանի որ կոյուղու համակարգը համայնքում բացակայում է, կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից, ինքնահոս ձևով կհեռացվեն նոր նախագծվող սեպտիկ հորից և պարբերաբար կհեռացվեն համապատասխան ծառայության միջոցով՝ պայմանագրային հիմունքներով:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1. Հողամասի կադաստրային մակերեսը՝ 12843.90 մ<sup>2</sup> (100 %),
2. Կառուցապատման մակերեսը՝ 3950.90 մ<sup>2</sup> (30.76 %),
3. Հողամասի խոտածածկ մակերես՝ 4075.75 մ<sup>2</sup> (31.73 %),
4. Չմշակվող մակերես՝ 1555.80 մ<sup>2</sup> (12.11%) (տարածքով անցնում է 110 կՎ լարման հոսքագիծ),
5. Ճանապարհներ՝ 573.90 մ<sup>2</sup> (4.47%)





Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա, որտեղ կեղտաջրերի, բետոնաջրերի հետերոգեն զանգվածի նստեցումից հետո՝ վերջիններս հնարավոր կլինի շինաղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ մնացորդ ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է բացառել աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում, շինարարական աղբն ամբողջությամբ անհրաժեշտ է տեղափոխել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, անհրաժեշտ է շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած նյութերը տեսակավորել: Առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը հեռացնել շինարար կապալառուի պահեստամաս՝ այլ աշխատանքներում օգտագործելու նպատակով, իսկ գոյացած աղբը տեղափոխել աղբավայր:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով, բացառել մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները: Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի իրականացում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,
- շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարարական նյութերի ձեռքբերում լիցենզավորված մատակարարից,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- թափոնների տեղափոխման կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի նորմերի սահմանում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,





## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Էկո Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրի դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝



Սվետլանա Կիզիրյան